
**ՌԴ ԵՎ ԱՄՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

ՀԱՅԿՈՒՅԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Մարդկության պատմության ողջ ընթացքում տեղեկատվությունը կարևոր դեր է խաղացել քաղաքակրթության զարգացման համար: Այն ոչ միայն տեղեկություն հավաքելու գործընթաց է, այլև դա ընկալելու, պահպանելու և փոխանցելու մեթոդների ամբողջություն: 20-րդ դարի երկրորդ կեսին տեղեկատվության ծավալն ու նշանակությունն ակնհայտորեն աճեցին, հետևապես բարդացավ դրա ապահովումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ բարդացան նաև տեղեկատվական անվտանգության սպառնալիքները, որոնց ապահովումը դարձավ պետությունների ներքին ու արտաքին քաղաքականության առաջատար ուղղություններից մեկը:

Մասնագիտական գրականության մեջ «տեղեկատվական անվտանգություն» հասկացության հստակ սահմանում մինչ օրս չկա, ավելին՝ եղածներն այնքան տարբեր են, որ հաճախ նույնիսկ հակասում են միմյանց:

Այսպես, սոցիոլոգները «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը դիտարկում են սոցիոլոգիայի ուղղություններից մեկի՝ տեղեկատվության սոցիոլոգիայի շրջանակում՝ դրանով իսկ փոխկապակցելով հասկացության սահմանման սոցիոլոգիական ու տեղեկատվական մոտեցումները:

Փիլիսոփաները հիմնվում են տեղեկատվական անվտանգության երեք բաղկացուցիչների վրա՝

- սուբյեկտների տեղեկատվական պահանջների բավարարում,
- տեղեկատվության անվտանգության ապահովում,
- սուբյեկտների պաշտպանության ապահովում:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում տեղեկատվական անվտանգությունը սահմանվում է որպես տեղեկատվության բնագավառում ազգային շահերի ապահովության վիճակ, այսինքն՝ անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջություն:

Տեղեկատվական անվտանգության ժամանակակից խնդիրների սահմանման համար ՌԴ-ում հիմք են հանդիսացել Ի. Ա. Լազարևի, Վ. Ն. Լոպատինի, Յու. Ա. Ուֆիմցևի, Ե. Ա. Երոֆեևի համակարգային հետազոտությունները:

Այսպես, Վ. Ն. Լոպատինը առանձնացնում է տեղեկատվական - հոգեբանական անվտանգությունը և այն սահմանում որպես վնասակար տեղեկատվության ազդեցությունից անհատի, հասարակության ու պետության կենսական կարևոր շահերի պաշտպանության իրավիճակ¹:

¹ См. у Лопатин В. Н. Информационное право. Учебник. СПб., 2005, т. 474:

Տ. Ա. Պոլյակովան տեղեկատվական անվտանգությունը դիտում է որպես տեղեկատվության բնագավառում Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի պաշտպանության իրավիճակ և դա համարում անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջություն², ինչը համապատասխանում է Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ռազմավարության հայեցակարգում ամրագրված՝ տեղեկատվության բնագավառում անվտանգության ապահովման սկզբունքին:

Ըստ այսմ, կարևորելով տեղեկատվական անվտանգության դերը՝ հարկ ենք համարում անդրադառնալ տեղեկատվական անվտանգության վերաբերյալ երկու պետությունների՝ Ռուսաստանի Դաշնության և Ամերիկայի Միացյալ Նահանգների ընդունած հայեցակարգերին:

Տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում Ռուսաստանի Դաշնության հիմնական նորմատիվային-իրավական ակտերն են՝ 2000 թ. սեպտեմբերի 9-ին ՌԴ նախագահի կողմից հաստատված՝ Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը (հր. № 1895)³, ՌԴ-ում տեղեկատվական հասարակության զարգացման ռազմավարությունը (2008 թ. փետրվարի 7, հր. № 212)⁴, Ռուսաստանի Դաշնության ազգային անվտանգության ռազմավարությունը մինչև 2020 թ. (2009 թ. մայիսի 12, հր. № 537)⁵:

Ռուսաստանի Դաշնության՝ խնդրո առարկային վերաբերող ընդհանուր նորմատիվային-իրավական ակտերից կարելի է առանձնացնել նաև ՌԴ Սահմանադրությունը, «Անվտանգության վերաբերյալ» 2010 թ. դեկտեմբերի 28-ին հաստատված՝ Ռուսաստանի Դաշնության դաշնային օրենքը (№ 380-Փ3)⁶, «Տեղեկատվության, տեղեկատվական տեխնոլոգիաների և ապահովման ու տեղեկատվության վերաբերյալ» 2006 թ. հուլիսի 27-ի դաշնային օրենքը (№ 149-Փ3)⁷:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը նպատակների, խնդիրների, սկզբունքների վերաբերյալ պաշտոնական տեսակետների ամբողջություն է, Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական ուղղություն: Այն ՌԴ տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում պետական քաղաքականության ձևավորման, տեղեկատվական անվտանգության իրավական, մեթոդական, գիտատեխնիկական կատարելագործման առաջարկների նախապատրաստման, տեղեկատվական անվտանգության ապահովման նպատակային ծրագրերի մշակման հիմքն է⁸:

Հայեցակարգում առանձնացվում են տեղեկատվության բնագավառում Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի չորս հիմնական բաղկացուցիչներ: Դրանցից առաջինն ընդգրկում է տեղեկատվության ստաց-

² Տե՛ս նույն տեղը:

³ http://www.rg.ru/oficial/doc/min_and_vedom/mim_bezop/doctr.shtm

⁴ <http://www.rg.ru/2008/02/16/informacia-strategia-dok.html>

⁵ <http://www.scrf.gov.ru/documents/99.html>

⁶ <http://www.rg.ru/2009/12/30/koap-dok.html>

⁷ <http://www.rg.ru/2006/07/29/informacia-dok.html>

⁸ Տե՛ս http://www.rg.ru/oficial/doc/min_and_vedom/mim_bezop/doctr.shtm

ման և օգտագործման բնագավառում մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պահպանումը: Երկրորդ ՌԴ պետական քաղաքականության տեղեկատվության ապահովումն է, որը հիմնականում վերաբերում է Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության մասին միջազգային հասարակությանը հավաստի տեղեկատվություն ապահովելուն:

Տեղեկատվության բնագավառում Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի երրորդ բաղկացուցիչը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն է, ինչպես նաև հայրենական տեղեկատվական ռեսուրսների հավաքման, պահպանման ու դրանց արդյունավետ կիրառման ապահովումը: Չորրորդ բաղկացուցիչն ընդգրկում է անթուլա տրեյի մուտքերից տեղեկատվական ռեսուրսների և տեղեկատվական ու հեռահաղորդակցային համակարգերի անվտանգության ապահովումը:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում սահմանվում են նաև ՌԴ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների տեսակները, աղբյուրները, տեղեկատվական անվտանգության իրավիճակը և դրա ապահովման հիմնական խնդիրները:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում սպառնալիքներ են համարվում այն երևույթները, որոնք ուղղված են մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների, Ռուսաստանի Դաշնության պետական քաղաքականության տեղեկատվության ապահովման, հայրենական տեղեկատվական արտադրության զարգացման, Ռուսաստանի տարածքում տեղեկատվական և հեռահաղորդակցային միջոցների անվտանգության դեմ:

Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության սպառնալիքները բաժանվում են երկու խմբի՝ արտաքին և ներքին:

Որպես տեղեկատվական անվտանգության սպառնալիքների հիմնական արտաքին աղբյուրներ առանձնացվում են տեղեկատվության բնագավառում ՌԴ շահերի դեմ ուղղված օտարերկրյա քաղաքական, տնտեսական, ռազմական, հետախուզական ու տեղեկատվական կառուցվածքների, ինչպես նաև միջազգային ահաբեկչական կազմակերպությունների գործունեությունը, գերտերությունների տեխնոլոգիական առաջընթացը և դրանց համեմատ ռուսական տեղեկատվական տեխնոլոգիաների հետ մնալը:

Որպես ՌԴ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների ներքին հիմնական աղբյուրներ առանձնացվում են հայրենական արտադրության ճյուղերի ծայրահեղ ցածր վիճակը, տեղեկատվության բնագավառը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի ոչ բավարար մշակվածությունը, քաղաքացիական հասարակության ինստիտուտների ցածր զարգացածության աստիճանը, ինչպես նաև ՌԴ տեղեկատվական շուկայի զարգացմանը միտված ոչ բավարար պետական վերահսկողությունը:

Ակնհայտ է, որ տեղեկատվական անվտանգության ապահովումը բարդ գործընթաց է և պետք է իրագործվի տարբեր ուղղություններով: Հայեցակարգում նշվում է, որ հասարակական կյանքի տարբեր բնագավառներում՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային և այլն, տեղեկատվական անվտանգության ապահովման համար Ռուսաստանի Դաշնությունը պետք է ծավալի միջազգային սերտ համագործակցություն, ընդլայ-

նի մասնակցությունը միջազգային տարբեր կազմակերպություններին, հատուկ ուշադրություն պետք է դարձնի ԱՆԿԻ Պետությունների Համագործակցության անդամ երկրների հետ ունեցած փոխհարաբերություններին:

Ինչ վերաբերում է Ամերիկայի Միացյալ Նահանգներին, ապա այնտեղ տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները հատկապես հրատապ դարձան 1990-ական թվականների կեսերին, երբ զգալիորեն աճեց տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով իրականացվող հանցագործությունների թիվը: Երկրի ղեկավարությունը մշակեց տեղեկատվական սպառնալիքներին հակազդելու տարբեր մեթոդներ: Ընդունվեցին օրենքներ, որոնք պատիժ էին սահմանում հանցավոր նպատակներով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման համար, իսկ 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո ահաբեկչության դեմ պայքարի անվան տակ Ջորջ Բուշի կառավարությունը⁹ ազգային անվտանգության ապահովման համակարգում լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացրեց, որով հատուկ ուշադրություն էին դարձվում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմանը:

Այս շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման և տեղեկատվական անվտանգության ապահովման բնագավառում ԱՄՆ դաշնային կառավարության իրականացրած քաղաքականությունը հիմնականում ուղղված է եղել միջազգային ահաբեկչության դեմ մղվող պայքարին:

Եթե մինչև 2001 թվականը ԱՄՆ նորմատիվային փաստաթղթերում «տեղեկատվական անվտանգություն» հասկացությունը շատ քիչ էր օգտագործվում, ապա արդեն 2002 թվականին ընդունվեց օրենք «Տեղեկատվական անվտանգության կառավարման վերաբերյալ», որտեղ տեղեկատվական անվտանգությունը սահմանվում էր որպես¹⁰.

- անթույլատրելի մուտքից, օգտագործումից, բացահայտումից, տարածումից, մոդիֆիկացումից կամ ոչնչացումից տեղեկատվության և տեղեկատվական համակարգերի պաշտպանություն,

- ոչ իրավական փոփոխությունից կամ ոչնչացումից տեղեկատվության ամբողջականության ապահովում,

- գաղտնիության ապահովում, որը նշանակում է տեղեկատվության հասանելիության ու տարածման հաստատված սահմանափակումների աջակցություն, այդ թվում՝ մասնավոր կյանքի և սեփականության տվյալների գաղտնիություն,

- հասանելիություն, որը նշանակում է արագ և հուսալի մուտք դեպի տեղեկատվություն:

Տեղեկատվական անվտանգության բնագավառում ԱՄՆ նորմատիվային ակտերում կարևոր է նաև «Տեղեկատվական անվտանգության վերաբերյալ»¹¹ օրենքի դերը, որը նպատակ ունի նվազագույն գործողությունների իրականացմամբ, առանց հնարավոր գործողությունների ողջ սպեկտրի սահմանափակման ապահովել դաշնային համակարգային ցանցերում տեղեկատվության անվտանգությունը:

⁹ Տե՛ս <http://www.georgewbushlibrary.smu.edu/>

¹⁰ Տե՛ս «The Federal Information Security Management Act of 2002»:

¹¹ Տե՛ս «Computer Security Act of 1987», Public Law 100-235 (H.R. 145), January 8, 1988

Փաստորեն, ԱՄՆ-ի հիմնական նորմատիվային փաստաթղթերում տեղեկատվական անվտանգությունը ցանցի կամ համակարգի կարողությունն է՝ հակազդելու այն չարամիտ գործողություններին, որոնք կարող են խախտել տեղեկատվության հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը: Իսկ անվտանգության ապահովումը սահմանվում է որպես տեղեկատվության հասանելիություն, ամբողջականություն, գաղտնիություն:

Այսպիսով, եթե Ռուսաստանի Դաշնության տեղեկատվական անվտանգության հայեցակարգում հստակ նշվում է, որ տեղեկատվական անվտանգությունը տեղեկատվության բնագավառում Ռուսաստանի Դաշնության ազգային շահերի պաշտպանության վիճակն է, որը բնութագրվում է անհատի, հասարակության ու պետության հավասարակշռված շահերի ամբողջությամբ, ապա ԱՄՆ-ում տեղեկատվական անվտանգությունը ցանցի կամ համակարգի կարողությունն է՝ հակազդելու այն չարամիտ գործողություններին, որոնք կարող են խախտել տեղեկատվության հասանելիությունը, ամբողջականությունն ու գաղտնիությունը:

АЙКУИ МКРТЧЯН – Сравнительный анализ нормативных подходов к информационной безопасности в РФ и США. – Сравнивая концептуальные подходы к информационной безопасности в РФ и США, легко заметить, как они различны. В России под информационной безопасностью понимают защищённость национальных интересов, определяемую как совокупность сбалансированных интересов личности, общества и государства. В Соединённых Штатах под информационной безопасностью понимается способность сети или системы нейтрализовать любой вред, угрожающий доступности, целостности и конфиденциальности информации.

HAYKUNI MKRTCHYAN – Comparative Analysis of Information Security Concepts of the RF and the USA. – Comparing regulatory approaches of information security of the RF and the USA it is obvious that in the RF Information Security is the situation of national interest defense, what is defined by the balance of personal, public and state interests.

The Information security is the possibility of the system to resist harmful activities, which can affect accessibility, integrity and privacy of keeping information in the USA.